ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ն., *Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2016, 84 էջ:*



Գիտության և քաղաքականության մեջ կան հիմնահարցեր, որոնք հատունանում են հասարակական գիտակցության մեջ, բայց իրականության թելադրանքով հապաղում են ի հայտ գալ, իսկ հայտնվելուց հետո իսկույն իրենց վրա են բևեռում հանրության ուշադրությունը՝ կարծեք ի հատուցումն դրան նախորդող թվացյալ անփութության: Այդպիսին է, կարելի է կարծել, հայոց ցեղասպանության մեջ քրդերի մասնակցության հարցը և այդ հարցի մյուս երեսակը՝ այս անգամ արդեն արդիական գործընթացներով, այսինքն, հայկական հայեցակարգում քրդական գործոնի տեղի ու նշանակության արժևորումը՝Արևմտյան Հայաստանի հեռապատկերով հանդերձ: Մեկ ամբողջականություն ներկայացնող այս հիմնահարցերի առաջադրմանն ու քննարկմանն է նվիրված պրոֆ. Ն. Հովհաննիսյանի սույն՝ գրախոսվող աշխատությունը:

Հենց սկզբից ասենք, որ քրդական գործոնի անտեսումն ու շրջանցումը հատուկ են հետցեղասպանության շրջանի տասնամյակների հայաստանյան պատմագիտությանը, եթե չհաշվենք առանձին կամ կցկտուր անդրադարձները: Քրդական գործոնը ներծծվել էր օսմանյան և երիտթուրքական ոճրագործության ընդհանուր ծալքերում՝ զրկվելով իր ինքնուրույն, ուրեմն և իրական նշանակությունից, ուստի անհրաժեշտորեն առաջ է գալիս հիմնահարցը սահմանելու խնդիրը: Եվ այս իմաստով մենք լիուլի համաձայն ենք հեղինակի հետ՝ նախ պետք է որոշել թուրք ցեղասպանների հետ քրդական մեղսակցության իրական չափն ու որակները և ապա գնահատել և՛ մեկը, և՛ մյուսը: Հիրավի, զանգվածային ծավալների հասնող այդ մեղսակցությունը սոսկ կրոնական կամ ցեղային վայրագության դրսևորում չի եղել, այլ ունեցել է իր քաղաքական շահախնդրությունները՝ ակնկալելով Արևմտյան Հայաստանի տարածքը տնօրինելու արդյունքը, ի փոխհատուցումն քրդերի՝ ցեղասպանությանը համատարած մասնակցության: Այդ ակնկալիքներից խթանվող իրենց գործողություններում քրդերը, ինչ ասել կուզի, ըստ ամենայնի քաջալերվում էին թուրքական կառավարողների կողմից՝ սեփական խղճի մնացորդների հետ միասին կուլ տալով անչափ հրապուրիչ այն խայծը,

որ կոչվում էր **Արևմտյան Հայաստան:** *Եվ ինչպես ամեն մի պատրանքային բան, այդ խայծն էժան չնստեց համիդիեները գոյացնող և իրենց զոհերին հոշոտելու նետված քրդական բազմություններին, նրանց կրոնական և աշխարհիկ առաջնորդներին: Թուրքերը պարզապես խաբեցին նրանց: Արևմտյան Հայաստանի փոխարեն նրանք ստացան հանրապետական Թուրքիայի՝ մեկը մյուսին հետևող աղետաբեր հարվածները՝ ուղղված իրենց քաղաքացիական իրավունքների և առհասարակ քրդական ինքնության դեմ: Շարունակությունը հայտնի է՝ քրդերի ապստամբությունները, դրանց անողորմ ճնշումները, ապա և զինված պայքարը հակամարտող կողմերի միջև, որ չի դադարում առ այսօր: Արևմտյան Հայաստանին տիրանալու սևեռուն միտքը, սակայն, առայսօր էլ, որպես տխուր ատավիզմ, ուղեկցում է Թուրքիայի դեմ պայքարող քրդերին որովհետև «այսօր էլ քիչ չեն քրդական այն քաղաքական ղեկավարները, ցեղապետները, կրոնա-կան առաջնորդները, մտավորականները և հասարակական գործիչները, որոնք դեռ փայփայում են Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ քրդական հնամաշ երազանքները» (էջ 11):*

Աշխատության առաջին հատվածներում հեղինակը բացահայտում է ցեղասպանությանը քրդերի մասնակցության պատճառները. նախ՝ կարևորը, ընչաքաղցությունը, իրենցից անհամեմատ բարեկեցիկ հայերին թալանելու մոլուցքը, որ բորբոքվում էր երիտթուրքական մարդակերների՝ փոխհատուցման շռայլ խոստումներով: Այդ խոստումները ծայր էին առել և պտտեցրել քրդական առաջնորդների գլուխները դեռևս Բեռլինի վեհաժողովի ժամանակներում, երբ Աբդուլ Համիդի և նրա շրջապատի նպատակը դարձավ Հայկական հարցը միջազգային քաղաքական օրակարգից վերացնելը, «Հայաստան» հասկացության աշխարհագրական, ուրեմն և էթնիկական իմաստի ոչնչացումը: Եվ քանի որ սուրբ տեղը դատարկ չի մնում, դարի վերջին քառորդին թուրք կառավարողները, ապա հատկապես երիտթուրքերը Ադանայից հետո (1909) ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը, Արևմտյան Հայաստանը վերանվանեցին «Քրդստան»՝ քրդերին ներշնչելով պատրաստի հայրենիքի տեր կանգնելու անչափ մեծ ցանկությունը: Անշուշտ, մի հայտնի չափով նշանակություն ունեցան նաև երիտթուրքերի կողմից իրենց պատերազմը ջիհադ հռչակելը, քուրդ զանգվածների մոլեռանդությունն ու իրենց առաջնորդներին անմռունչ ենթարկվելու ավանդական կենսակերպը:

Թվում է՝ քրդական վերոհիշյալ հավակնությունները այսօր տիրապետող են նրանց ղեկավար գործիչների մեջ, և, ուրեմն, այլևս անիմաստ կլինեն հայկական մտավոր կողմի ջանքերը՝ վերադարձնելու նրանց կատարված իրողությունների և դրանց արդի հետևանքների իրական ու ճշմարտացի ընկալման եզրեր: Որ այդ այդպես չէ, որ քուրդ հասարակական գիտակցությունը, այսուհանդերձ, ի զորու է սթափ անդրադառնալ սեփական և ուրիշների պատմությանը և անգամ ընդունել իրենց՝ քրդերի գործուն մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, հեղինակը փաստարկում է քուրդ պատմաբան Քեմալ Ահմադի վկայակոչումով: Ավաղ, ոչ այնքան ժամանակակից, այլ

1970-ական թթ. մի հեղինակի օրինակով, սակավաթիվ քուրդ գիտնականներից մեկի, որ ձգտում է մնալ «գիտականության շրջանակներում և խնդիրը լուսաբանել առարկայորեն» (էջ 14): Եվ եթե հիմնահարցին քաջատեղյակ Ն. Հովհաննիսյանը ուրիշ այլ հեղինակի չի տեսնում քրդական միջավայրում, այդ ավելի է ընդգծում մեր տագնապը Արևմտահայաստանին թող որ տեսականորեն տեր կանգնելու՝ քրդական մտավոր ու քաղաքական վերնախավի մտադրություններին դեմ հանդիման: Այս տագնապը որոշակիություն է ստանում քրդական շատ գործիչների պնդումներով, որ իրենք նկատի ունեն Արևմտյան Հայաստանի տարածքը: Ուրիշի հայրենիքին տիրելու այս ձգտումը նրանք հիմնավորում են միջնադարյան համարժեք, բայց և խոստովանենք, նաև մեր օրերում ևս կենսունակությունից ոչ զուրկ ձևակերպումով՝ հողը պատկանում է նրան, ով արյուն է հեղում դրա համար: Սա, անշուշտ, լուրջ մարտահրավեր է՝ նետված Արևմտահայաստանի իրական տիրոջը՝ հայրենազրկված և օրինական իրավունքներից կողոպտված ամբողջ հայությանը, և որին դիմակայելու անհրաժեշտությունն ու եղանակը հեղինակը քննարկում է աշխատության հաջորդ հատվածներում:

Քննարկելով արաբական պատմագիտության մեջ քրդերի հիշյալ մեղսակցությանը տրված գնահատականը՝ պրոֆ. Հովհաննիսյանը այն բնութագրում է հստակ ձևակերպումներով. որքան էլ ածանցյալ օսմանյան պետության ցեղասպան քաղաքականությունից, հանդես գալով որպես սոսկ միջոց հանցապարտների ձեռքին, քրդերն, այսուհանդերձ, չեն ապահովագրվում պատմական պատասխանատվությունից: Արաբ պատմաբանների հեղինակային այս վկայակոչումը անառարկելիորեն գնահատելի է հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման տրամաբանությունն ու ծավալները իրապես չափելու և անաչառ չափակշռելու տեսակետից: Իր եզրահանգումներն այս հիմնախնդրում հեղինակն առարկայորեն ամրապնդում է արաբ պատմաբաններ Մուսա Պրենսի, Ուսման ալ-Թուրքի, Ֆուադ Հասան Հաֆիզի աշխատությունների հմուտ վերլուծությամբ: Ինքը՝ հեղինակը, այս դեպքում հանդես է գալիս որպես հայ և արաբ ժողովուրդների պատմական բախտակցության, օսմանյան բռնապետության դեմ նրանց պայքարի հիմքերն ու ծալքերը վերհանող մտավորական, ում տեսակետներն այս հարցում բարձր են գնահատվում արդի ոչ միայն հայ, այլև արաբական պատմագիտության մեջ:

Արաբական պատմագիտության վկայակոչումը ուշագրավ է նաև մեկ այլ առումով. այն ուրիշի աչքերով իսկ հիմնավորում է այն ճշմարտությունը, որ քրդական հավակնությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ ոչ այլ ինչ է, բայց եթե ցեղասպանության գործիք լինելու դիմաց իրեն իսկ պարգևատրող երբեմնի զանգվածի հարատևած մտայնություն: Այն, ինչ խոստանում էր քրդերին օսմանյան քաղաքականությունը, այսօր քրդական ղեկավարներն են խոստանում իրենք իրենց. «կատուն չքացել է, բայց մնում է նրա ժպիտը», - ինչպես ասում էին հնում: «Քրդերը մոռանում են, որ իրենք սոսկ Արևմտյան Հայաստանի բնակիչներ են և ոչ ավելին»,-իրավամբ եզրակացնում է հեղինակը (էջ 45): Հիրավի, հայաթափ Արևմտյան Հայաստանում նրանք դարձել են բնակչության գերակշիռ մասը և այն համարում են քրդական տարածք,

նկատում է հեղինակը և սրանից մակաբերում, որ Արևմտյան Հայաստանի ապագայի որևէ խնդրի արծարծման դեպքում հայերն անխուսափելիորեն դեմ են առնելու քրդական անհանդուրժողականությանը՝ սրանից բխող միջազգային սրված շահագրգռություններով հանդերձ: Հայությունը պետք է պատրաստ լինի այդ սպառնալիքներին,և սա մտահոգիչ այն ազդակներից մեկն է, որին դիմագրավելու կարևոր խնդիրը մղել է հեղինակին՝ գրիչ վերցնելու: Անմիջականորեն սրա հետ կապված՝ նա հիմնավորում է այս աշխատության կարևոր նպատակը՝ վերացնել զարմանք պատճառող այն իրողությունը, որ Հայաստանը մինչև օրս «չի ունեցել որևէ հայեցակարգ քրդական հարցում՝ Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների կարգավորման տեսանկյունից» (էջ 59): Այդպիսի հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը նա հիմնավորում է Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող գործոններով, որպիսիք են հայերի ազգային անվտանգության ապահովումը և «հայ ժողովրդի՝ Արևմտյան Հայաստանի բնիկների օրինական իրավունքների» վերականգնումը (նույն տեղում): Ընդսմին, հեղինակն այդ հարցը համարում է ոչ միայն Հայաստանի արդի հանրապետության, այլև համայն հայության գերակա խնդիր, որի մշակումը պետք է դրվի հանրապետության «արտաքին քաղաքականության հիմքում, որպես նրա կարևոր ուղղություններից մեկը» (նույն տեղում): Իբրև այս սկզբունքային հարցադրման շարունակություն, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը առաջ է քաշում իր նկատառումներն ու առաջարկությունները Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների վերաբերյալ ազգային հայեցակարգի մշակման, այդ թվում և հայ-քրդական հարաբերությունների կարգավորման առթիվ, ինչպես և շարադրում է դրան ուղղված հնարավոր տարբերակները: Դրանք ունեն համազգային ծավալներ, որպիսիք են հայեցակարգի մշակման համահայկական հանձնաժողովի ստեղծում՝ ՀՀ նախագահի համակարգող գործառույթով, գործադիր մարմին, Հայաստանում և արտերկրում քննարկումներ և այլն: Առաջարկվում է նախաձեռնություն հանդես բերել հայ-քրդական երկխոսություն սկսելու համար՝ մեկնելով այն ճշմարտությունից, որ «Արևմտյան Հայաստանը երբեք քրդերի բնօրրանը չի եղել, նրանց երկիրը չէ և չի կարող լինել» (էջ 60):

Այսպիսի եզրափակումը վկայում է, որ մեր մտավորականությունը խորապես գիտակցում է արդի շրջանում հայ-քրդական առողջ հարաբերությունների ամրապնդման, կողմերի դիրքորոշումները ճշտելու և սեփական մոտեցումները հանրությանը ներկայացնելու ոչ միայն կարիքը, այլև անհրաժեշտությունը, եթե այս գործընթացը սկսելու համար բավականաչափ զուր ժամանակ չի կորսվել, գոնե հայերիս համար՝ հայեցողական անպտուղ մտորումների հաշվին:

Հիմնախնդրի կարգավորման չափազանց բարդությունը պայմանավորվում է նաև Թուրքիայի՝ որպես պետության վերաբերմունքով ու արձագանքով, մի պետության, որ ներկայումս տնօրինում է Արևմտյան Հայաստանի տարածքը, ուստի և հեղինակը բացառիկ տեղ է տալիս այս իրողությանը՝ նշված հայեցակարգի մշակման գործընթացում: Եվ դարձյալ, նկատի առնելով դրա հետ կապված բազմաթիվ դժվարութ-

յունները թե՛ ժամանակային, թե՛ քաղաքական և թե՛ ծրագրային տեսանկյուններից, պրոֆ. Ն. Հովհաննիսյանն առաջարկում է հիմնախնդրի կարգավորման հնարավոր տարբերակներ՝ արևմտահայերի վերադարձն իրենց բնակավայրերը Թուրքիայի և քրդերի համաձայնությամբ և մեծ տերությունների ու միջազգային կառույցների աջակցությամբ, Արևմտյան Հայաստանում հայերի վերաբնակեցման դեպքում և կրկին Թուրքիայի համաձայնությամբ՝ հայերի տարածքային կամ մշակութային ինքնավարություն, թուրքական կողմից վերոնշյալ տարբերակների մերժման պարագայում ցեղասպանության ենթարկված և հայրենազրկված հայերի ժառանգներին նյութական և ֆինանսական համարժեք փոխհատուցման պահանջ: Հեղինակն առաջադրում է և «իդեալական տարբերակ»՝ «Արևմտյան Հայաստանի անկախության կամ Հայաստանի Հանրապետությանը միավորելու տարբերակ»: Եթե հեղինակային նախորդ առաջադրումները ենթադրում են հարցի ոչ թե ավարտուն, այլ հանգրվանային լուծումներ, ապա «իդեալական տարբերակը» հեղինակը ներկայացնում է իբրև հիմնախնդրի վերջնական կարգավորում, հայրենիքի վերահայցման նպատակի իրականացում՝ Թուրքիայի, որպես պետության տրոհման հենքի վրա:

Կարելի է ասել, որ պրոֆ. Ն. Հովհաննիսյանի առաջարկած հինգ տարբերակներն էլ, իրացման հավանականության այս կամ այն տարբերությամբ, բնականաբար, ունենալով հիպոթետիկ, ենթադրական բնույթ, կարող են դիտվել որպես ընդամենը հեղինակի հայրենասիրական զգացումների և մտավոր վերլուծական մեծ ներուժի յուրօրինակ դաշինքի արդյունք: Արդյոք քաղաքակրթության սցենարը իր անվերջանալի և հատկապես մեր ժամանակներում քմահաճ և կտրուկ փոխակերպումներով կարող է այս կամ այն կերպ համընկնել պրոֆ. Ն. Հովհաննիսյանի՝ ապագային նետված ակնկալիքներին: Արդյոք մեր հակառակորդներն ու թշնամիները, անգիտանալով քաղաքագիտական կռահումների սովորական և ամենուրեք ընդունված մեթոդները, չեն չարաշահի վաղեմի ասացվածքը՝ «դեռ չսպանված արջի մորթին չեն բաժանում»: Անշուշտ, չեն բաժանում, որովհետև, ճիշտն ասած, այս դեպքում բաժանելու բան էլ չկա. հայրենիքը, թեկուզ և խլված վիճակում, չեն բաժանում: Բայց կա նաև մեկ այլ, թերևս ավելի կարևոր ճշմարտություն. եթե ճակատագրով դատապարտված ես զորեղ հակառակորդի դեմ դուրս գալու, պետք է պատրաստ լինես դրան ըստ ամենայնի՝ ֆիզիկական, հոգևոր և մտավոր ամբողջ կարելիություններով, վարքագծով և միմյանց ու աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքով:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանը հավատում է դրան՝ բոլորիս գործողության կոչող իր հույժ արդիական, այլև հրատապ աշխատությամբ, և դրանում է կայանում վերջինիս մտավոր լուրջ արժեքը:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ